



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ապրիլի 2017թ.

N 14-Ս

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԱՆՅԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը **որոշում է**.

1. Հավանություն տալ Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի կազմակերպման և անցկացման վերաբերյալ Արցախի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի հաղորդագրությանը՝ համաձայն հավելվածի, և այն ներկայացնել Արցախի Հանրապետության Ազգային ժողով:

2. Առաջարկել Արցախի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահի տեղակալ Եղիշե Արզումանյանին՝ սույն որոշման 1-ին մասում նշված Արցախի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի հաղորդագրությամբ հանդես գալ Արցախի Հանրապետության Ազգային ժողովում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԾ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր ակնարկ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հունվարի 19-ի «Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը հանրաքվեի դնելու մասին»ՆՀ-7-Ն հրամանագրով Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվեն նշանակվել է 2017 թվականի փետրվարի 20-ին: Սա 26 տարվա անկախություն ունեցող Արցախի Հանրապետության թվով 3-րդ համապետական նշանակության հանրաքվեն էր, և դրա նախապատրաստումն ու կազմակերպումն իրականացվել է «Հանրաքվեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (այսուհետ՝ ԼՂՀ) օրենքի և 2015 թվականի հունվարի 1-ին գործողության մեջ դրված ԼՂՀ նոր ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Հանրաքվեն անցկացվել է ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 28-ի N15-Ն որոշմամբ կազմավորված հանրապետության ամբողջ տարածքն ընդգրկող թվով 11 ընտրատարածքներում:

ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի (այսուհետ՝ ՀԿՀ) 2017 թվականի հունվարի 20-ի N2-Ա որոշմամբ սահմանվել են հանրաքվեի այն տարածքային հանձնաժողովները, որոնց լիազորություն է վերապահվել համապատասխան համայնքներում կազմակերպել և անցկացնել հանրաքվե: Թիվ 10 ընտրատարածքում, որն ընդգրկում է Շուշիի և Քաշաթաղի շրջանների բոլոր համայնքները, հանրաքվեն կազմակերպելու և անցկացնելու լիազորությունը տրվել է հանրաքվեի Քաշաթաղի տարածքային հանձնաժողովին, իսկ թիվ 11 ընտրատարածքում, որն ընդգրկում է Շահումյանի շրջանի բոլոր, Ասկերանի շրջանի թվով 12 և Մարտակերտի շրջանի թվով 16 համայնքները՝ հանրաքվեի Մարտակերտի տարածքային հանձնաժողովին:

Հանրաքվեի ողջ գործընթացը կազմակերպել և հանրաքվեի օրինականության նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է ՀԿՀ-ը:

ՀԿՀ-ը 2017 թվականի հունվարի 20-ին հաստատել է Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը, որն ընդգրկում էր տվյալներ հանրաքվեի օր նշանակելուց մինչև դրա արդյունքների ամփոփումն իրականացվելիք թվով 87 հիմնական գործողությունների կատարման (միջոցառումների անցկացման) ժամկետների ու դրանց կատարման պատասխանատուների մասին: Համաձայն ժամանակացույցի՝ վերոհիշյալ գործողությունների մեկնարկը տրված է համարվել 2017 թվականի հունվարի 19-ին, իսկ հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածն ընդգրկել է հունվարի 19-ից մինչև փետրվարի 18-ի ժամը 24.00-ն:

Հանրաքվեի նախապատրաստման և անցկացման հետ կապված ԼՂՀ հանրաքվեի հանձնաժողովների (ՀԿՀ և մամուլի կենտրոն, հանրաքվեի 6 տարածքային և 280 տեղամասային հանձնաժողովներ) ծախսերի նախահաշվով նախատեսվել էր 85 750 200 ՀՀ դրամ: Նախատեսված

ծախսերի մեջ զգալի մաս են կազմել հանրաքվեի կազմակերպման և անցկացման աշխատանքներում ներգրավված 2335 հանձնաժողովականներին և այլ աշխատողներին տրվող փոխհատուցումների գումարներն ու աշխատավարձերը՝ 64 596 200 ՀՀ դրամ կամ ընդհանուր ծախսերի 75,3%-ը: Հանրաքվեի անցկացման համար փաստացի ծախսվել է 75 298 986 ՀՀ դրամ կամ նախատեսվածի 87,8 %-ը:

Կազմավորվել են 280 հանրաքվեի տեղամասեր (այդ թվում՝ ք. Երևանում և Շուշիի քրեակատարողական հիմնարկում), նույնքան էլ հանրաքվեի տեղամասային հանձնաժողովներ, որոնք կազմակերպել և իրականացրել են քվեարկությունը:

«Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքով և ԼՂՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվեի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել 30 երկրից Արցախ ժամանած 100 դիտորդներ, ինչպես նաև 4 տեղական կազմակերպությունների 103 դիտորդներ: Մասնակցում էին ՁԼՄ-ների 80-ից ավելի ներկայացուցիչներ:

Հանրաքվեի քվեարկությունը տեղի է ունեցել 2017թվականի փետրվարի 20-ին: Քվեարկության նախնական արդյունքները հրապարակվել են 2017թվականի փետրվարի 21-ին:

Հիմք ընդունելով «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը և հաշվի առնելով ԼՂՀ ընտրատարածքներում Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի վերջնական արդյունքների ամփոփիչ արձանագրությունները, 2017թվականի փետրվարի 23-ի ժամը 17.00-ի նիստում ՀԿՀ-ը կազմել է ամփոփիչ արձանագրություն, որի համաձայն՝

-հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ընդհանուր թիվը՝ ըստ ցուցակների 103 818 է,

-տեղամասային հանձնաժողովներին տրված քվեաթերթիկների թիվը՝ 105 061,

-գրանցված և քվեաթերթիկ ստացած քվեարկության մասնակիցների թիվը՝ ըստ ստորագրությունների՝ 79 428,

-մարված (չօգտագործված, ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ վերադարձված) քվեաթերթիկների թիվը՝ 25 633,

-քվեատուփում առկա սահմանված նմուշի քվեաթերթիկների ընդհանուր թիվը՝ 79 428 (այդ թվում՝ վավեր քվեաթերթիկների թիվը՝ 77 256, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 2 172),

-կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 69 570,

-դեմ քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 7 686 ,

-անճշտությունների չափը՝ 0:

Հիմք ընդունելով «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը և հաշվի առնելով, որ 2017թվականի փետրվարի 20-ին կայացած հանրաքվեի արդյունքներով կողմ է քվեարկել քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակներում ընդգրկված քաղաքացիների 67 տոկոսը (69 570 քաղաքացի), հանրաքվեի դրված հարցը՝ Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը որպես Արցախի Հանրապետության Սահմանադրություն ընդունվելու մասին, համարվել է ընդունված և «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ի մասի հիման վրա 2017թվականի փետրվարի 24-ին ՀԿՀ-ը ԼՂՀ արդարադատության նախարարություն է ներկայացրել ՀԿՀ 2017թվականի փետրվարի 23-ի «Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի ամփոփիչ արձանագրության մասին» N 11-Ա որոշումը:

**Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017թվականի
փետրվարի 20-ի հանրաքվեի կազմակերպումն ու անցկացումը**

1) Մասնագիտական դասընթացների կազմակերպում

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղամասային հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացիները, ովքեր կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայականներ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացները կազմակերպում և անցկացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Դասընթացները կազմակերպվում են Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա:

Նշված իրավական կանոնակարգումներին համապատասխան, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ առաջադրելու համար Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները կարող էին առաջադրել միայն որակավորման վկայական ունեցող քաղաքացիներին, կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2016 թվականին կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ: Կազմակերպված դասընթացներին մասնակցել և որակավորման վկայականներ են ստացել 1744 քաղաքացիներ, որոնց մեծ մասն ընդգրկվել է հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների կազմերում: Դասընթացի բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են դասընթացների կազմակերպման վայրի և ժամի մասին, այդ տեղեկությունները տեղադրվել են նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Դասընթացներն անցկացվել են Ստեփանակերտ քաղաքում և հանրապետության բոլոր շրջաններում: Դասընթացների կազմակերպման և անցկացման, ստուգարքի հանձնման և որակավորման վկայականներ շնորհելու գործընթացը որևէ անձի կողմից չի վիճարկվել:

Ուսումնական դասընթացներ են կազմակերպվել և անցկացվել նաև տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար:

2) Հանրային իրազեկում, հրապարակայնություն

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովը յուրաքանչյուր համապետական ընտրության ժամանակ կարող է հրապարակել ուսումնական ձեռնարկ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և դիտորդների համար: Օրենքի այս դրույթը ՀԿՀ-ն ապահովել է՝ ուսումնական ծավալուն ձեռնարկներից բացի հրապարակելով նաև հանրաքվեի անցկացման անհատական ուղեցույցեր հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի համար: Դիտորդների համար նախատեսված ձեռնարկը հրապարակվել է նաև օտարալեզու (ռուսերեն, անգլերեն) տարբերակով:

Հրապարակվել են տեղեկատվական բնույթի պաստառներ, հանրային իրազեկման մեկ հոլովակ: Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին տրամադրվել են «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենք, ԼՂՀ ընտրական օրենսգիրքը, Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագիծը: Ընդ որում՝ դիտորդներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին տրամադրվել են նաև ընտրական և հանրաքվեի գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև Արցախի Հանրապետությունը ներկայացնող այլ կարևորագույն տեղեկությունների բավական ընդգրկուն բովանդակությամբ փաթեթ՝ եռալեզու տարբերակով:

Հանրաքվեի գործընթացի լիակատար թափանցիկությունն ու լուսաբանումն ապահովելու նպատակով Ստեփանակերտի Մայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի շենքում ժամանակավոր հիմունքներով գործել է ՀԿՀ մամուլի կենտրոնը: Մամուլի կենտրոնի

նախապատրաստական-կազմակերպչական աշխատանքները հիմնականում սկսվել են փետրվարի 14-ին, բուն բացումը տեղի է ունեցել փետրվարի 18-ին:

Կառույցի ժամանակավոր աշխատակազմում ընդգրկվել է 24 հոգի (ստեղծագործական և տեխնիկական անձնակազմ): Եվս 2 հոգի՝ Երևանից հրավիրված օտար լեզուների մասնագետներ, աջակցել են մամուլի կենտրոնի աշխատանքներին՝ փետրվարի 19-ին և 21-ին կատարելով մամուլ-ասուլիսների բանավոր (համաժամանակյա) թարգմանություններ հայերենից-անգլերեն, ռուսերեն լեզուներով, և՛ հակառակը:

Արցախի Հանրապետության Սահմանադրության հանրաքվեի ընթացքի և արդյունքների մասին համապարփակ տեղեկատվություն տարածելու, ինչպես նաև հավատարմագրված միջազգային և տեղական դիտորդներին, հավատարմագրված և այլ ՁԼՄ-ների ներկայացուցիչներին հանրաքվեի գործընթացի իրողություններին տեղյակ պահելու նպատակով մամուլի կենտրոնում ստեղծվել են հնարավորինս ժամանակակից պայմաններ:

Մասնավորապես, մամուլի կենտրոնն ապահովված էր համացանցով, այդ թվում՝ Wi-fi կապով՝ մինչև 30 մբ/վրկ, իսկ փետրվարի 21-ին՝ մինչև 100 մբ/վրկ արագությամբ, հեռախոսակապով՝ միջազգային ելքով, նոութբուքերով (20 հատ), համակարգչային անհրաժեշտ այլ տեխնիկայով: Համացանցից և հեռախոսակապից օգտվելու հնարավորությունն անվճար էր: Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով պատրաստվել են մեդիա-փաթեթներ՝ ինչպես ԼՂՀ, այնպես էլ Սահմանադրության հանրաքվեի վերաբերյալ տեղեկատվական անհրաժեշտ նյութերով:

ՀԿՀ նախագահի, ինչպես նաև միջազգային դիտորդների ճեպագրույցները և մամուլ-ասուլիսները տեղի են ունեցել անմիջականորեն մամուլի կենտրոնի տարածքում՝ մեծ դահլիճում: Փետրվարի 19-ին տեղի է ունեցել ՀԿՀ նախագահ Սրբուհի Արզումանյանի 1 ընդարձակ մամուլ-ասուլիսը, փետրվարի 20-ին՝ ՀԿՀ անդամների 4 ճեպագրույց հանրաքվեի ընթացքի մասին, փետրվարի 21-ին՝ ՀԿՀ նախագահի ամփոփ 1 մամուլ ասուլիսը Սահմանադրության հանրաքվեի ընթացքի և արդյունքների մասին:

Միաժամանակ պայմաններ են ստեղծվել տարբեր երկրներից ժամանած միջազգային դիտորդական առաքելությունների կողմից 13 մամուլ ասուլիսներ անցկացնելու համար: Համեմատության համար՝ 2015թվականի մայիսի 3-ի ԼՂՀ խորհրդարանական ընտրությունների ժամանակ անցկացվել է միջազգային դիտորդական առաքելությունների 10 մամուլ-ասուլիս:

ՀԿՀ նախագահի և անդամների մամուլ-ասուլիսներն ու ճեպագրույցները հեռարձակվել են Արցախի հանրային հեռուստաընկերության ուղիղ եթերով: Բացի այդ, բոլոր ելույթները մամուլ-հաղորդագրությունների տեսքով ուղարկվել են տեղական, հայաստանյան, ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա և սփյուռքի մոտ 140 ՁԼՄ-ների էլեկտրոնային հասցեներով: Մամուլ-հաղորդագրությունները թարգմանվել և սփռվել են նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով: Ընդհանուր առմամբ, ուղարկվել է 9 մամուլ հաղորդագրություն: Միաժամանակ, փետրվարի 20-ին ԼՂՀ ժամանած միջազգային դիտորդներին և նրանց ուղեկցող անձանց, ովքեր դիտարկում էին անցկացնում Ստեփանակերտի և տարբեր շրջանների տեղամասերում, հանրաքվեի ընթացքի մասին ուղարկվել է 5 SMS-հաղորդագրություն:

Արցախի Հանրապետության Սահմանադրության մասին հայաստանյան և օտարերկրյա ՁԼՄ-ներում հրապարակված տեղեկատվությունն անմիջապես տպագրվել, բազմացվել և տեղադրվել է մամուլի կենտրոնում՝ ի գիտություն այդտեղ այցելած տեղական և միջազգային դիտորդների և լրագրողների:

ՀԿՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը հարցազրույցներ է տվել Արցախի և Հայաստանի հանրային հեռուստաընկերություններին ուղիղ եթերով:

Մամուլի կենտրոնում փետրվարի 18-22-ը ժամը 09:00-21:00 հերթականությամբ գործել է բուժկետը՝ 2 հոգի անձնակազմով (բժիշկ և բուժքույր):

Փետրվարի 17-22-ը գործել է նաև ոստիկանության հերթապահ մասը և «Արցախէներգ» ՓԲԸ մասնագետները՝ 2-ական հոգի անձնակազմով: Արտառոց դեպք տեղի չի ունեցել:

Փետրվարի 19-22 անվճար գործել է սրճարանը, «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության վաճառքի կետը:

Գործի համար խիստ շահեկան էր նոութբուքերի և այլ տեխնիկայի առկայությունը, երաժշտական քոլեջի շենքում Wi-Fi գոտու ստեղծումը՝ կառույցի գործունեությունը տեխնիկական տեսակետից լավ կազմակերպելու համար: Հանրաքվեի օրը՝ փետրվարի 20-ին ԼՂՀ տարբեր շրջաններում գտնվող միջազգային դիտորդներին և նրանց ուղեկցողներին SMS հաղորդագրություններ ուղարկելու մեխանիզմի կիրառումը հնարավորություն է տվել անմիջապես և ժամանակին բոլորին տեղյակ պահել հանրաքվեի ընթացքի, արդյունքների, այդ թվում՝ մամուլի կենտրոնում նախատեսվող մամուլ-ասուլիսների մասին: Բոլոր միջազգային դիտորդներին «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության կողմից անվճար տրամադրվել են կանխավճարային սիմ-քարտեր:

Հանրաքվեի ընթացքը քվեարկության օրը լուսաբանվել է Արցախի հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով, տեղեկատվությունը՝ եռալեզու տարբերակով տեղադրվել է ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային կայքում:

3) Ընտրողների ռեգիստրը, ընտրողների ցուցակներ

ԼՂՀ ընտրողների ռեգիստրը մշտապես վարվող փաստաթուղթ է, որը կազմվում է ըստ շրջանների (Ստեփանակերտ քաղաքի) և համայնքների: ԼՂՀ ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի:

Նախկինում ԼՂՀ-ում տեղի ունեցած համապետական ընտրությունների ժամանակ, ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ ընտրողների ռեգիստրում ընդգրկված) ընդգրկված ընտրելու իրավունք ունեցող անձանց թվաքանակի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2017թվականին աճել է ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը:

Այսպես.

2015թվականի մայիսի 3-ին կայացած ԼՂՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողների թիվը կազմել է 102 042, այսինքն՝ 2 815 ընտրողով (2,8 տոկոսով) ավելի, քան 2012թվականին կայացած Նախագահի ընտրությունների ժամանակ, և 3 524 ընտրողով (3,6 տոկոսով) ավելի, քան 2010թվականին կայացած Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ:

Փետրվարի 20-ի հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող 102 757 քաղաքացի, այսինքն՝ 711-ով ավելի, քան նախորդ՝ 2015 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Սա նշանակում է, որ Սահմանադրության հանրաքվեի մասնակցելու հնարավորություն ունեցող Արցախի Հանրապետության բնակչության 69 տոկոսը:

Հարկ է նշել, որ ԼՂՀ ընտրական օրենսգրքի 12-րդ հոլվածի համաձայն՝ ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները վերացնելու մասին լիազոր մարմին դիմում ներկայացնելու իրավունքը վերապահվել է յուրաքանչյուր անձի, ընդ որում՝ տրվել է օրենսդրական հնարավորություններ կայացնելու անգամ դիմողի անձին չվերաբերող անճշտությունները վերացնելու մասին դիմում: Նշված իրավական կարգավորումների արդյունքում քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցող անձանց ցուցակները ենթակա են եղել լիակատար վերահսկողության հանրաքվեի գործընթացի մասնակից բոլոր սուբյեկտների և հասարակության կողմից (բացառությամբ այլ պետություններում գտնվող քաղաքացիների):

4) Հանրաքվեի քարոզչություն, քարոզչության ֆինանսավորում

«Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածը սկսվում է հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից և

ավարտվում քվեարկությունից մեկ օր առաջ: Ժամանակացույցի համաձայն՝ հանրաքվեի քարոզչության ժամանակահատված է սահմանվել հունվարի 19-ից մինչև փետրվարի 18-ի ժամը 24.00-ն:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում սահմանված ժամկետներում հրապարակված են եղել՝

- քարոզչական միջոցառումների համար անվճար տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում ընդհանուր թիվը՝ 247).

- քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված անվճար տեղերի ցանկը:

Հանրաքվեի քարոզչությունը բավական ակտիվ է ընթացել:

Համաձայն «Հանրաքվեի մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ և ԼՂՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածների՝ «Ազատ հայրենիք», Արցախի Ժողովրդավարական կուսակցություն և «Ազգային վերածնունդ» կուսակցությունները ձևավորել են հանրաքվեի քարոզչության հիմնադրամներ:

ՀԿՀ 2017թվականի հունվարի 20-ի N 3-Ա որոշմամբ ստեղծված վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից վերահսկվել է քարոզչության հիմնադրամների ձևավորման, հիմնադրամներ կատարված կամավոր մուծումների, դրանց հաշվարկման և ծախսերի իրականացման ողջ գործընթացը: Այդ գործարքների իրականացման համար կուսակցություններին ցուցաբերվել է ամենօրյա մեթոդական և գործնական օգնություն: Նշված կուսակցությունները հանրաքվեի՝ իրենց քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով «Արցախբանկ» ՓԲԸ-ում և «Արդշինբանկ» ՓԲԸ-ում բացել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ:

«Արցախբանկ» ՓԲԸ-ում և «Արդշինբանկ» ՓԲԸ-ում ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ բացելուց հետո, 3-օրյա պարբերականությամբ բանկերը ՀԿՀ են ներկայացրել տեղեկանքներ կուսակցությունների քարոզչության հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի մասին:

Կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները պարբերաբար հրահանգավորվել են քարոզչության հիմնադրամների՝ սահմանված կարգով ձևավորման, ծախսերի իրականացման և հավանական խախտումներից խուսափելու համար:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ուսումնասիրելով և ընդհանրացնելով ներկայացված հայտարարագրերը և մյուս փաստաթղթերը, պարզել է, որ կուսակցությունների քարոզչության հիմնադրամներում կատարված մուտքերի ընդհանուր գումարը կազմել է 5320.0 հազ. դրամ, ծախսերի գումարը կազմել է 5042.9 հազ. դրամ, մնացորդը՝ 277.1 հազ. դրամ:

Կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները հիմնականում բարեխղճորեն են կատարել իրենց հիմնադրամների հետ կապված գործառնությունները: Քարոզչության հիմնադրամների ձևավորման, մուտքերի և ելքերի առումով կոպիտ խախտումներ չեն արձանագրվել:

Վերահսկողության այս գործառնություն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում:

5) Քվեարկություն

Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի անցկացման նպատակով կազմավորվել են 280 հանրաքվեի տեղամասեր, որոնցից 1-ը՝ Երևան քաղաքում, 1-ը՝ Շուշիի քրեակատարողական հիմնարկում: Քվեարկության օրը, առավոտյան ժամը 7.00-ին տեղամասային կենտրոններում կայացել են հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների նիստերը և ժամը 8.00-ին բացվել են տեղամասային կենտրոնները, սկսվել է քվեարկությունը: Քրեակատարողական հիմնարկում կազմավորված տեղամասային կենտրոնը բացվել է առավոտյան ժամը 9.00-ին:

Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովների կազմում սահմանված կարգով նշանակված են եղել 2230 քաղաքացիներ, որոնք բոլորն էլ ներկայացել են 280 հանրաքվեի տեղամասեր: Ընդ որում, 271 հանձնաժողովները (97%-ը) 8 հոգանոց կազմ ունեին, 8 հանձնաժողովներ 7 հոգանոց էին, 1-ը՝ 6 հոգանոց:

Համաձայն ԼՂՀ ընտրական օրենսգրքի 42-րդ հոդվածի՝ տեղամասային հանձնաժողովի անդամներին նշանակում են համապատասխան տարածքային հանձնաժողովի անդամները՝ տարածքային հանձնաժողովի մեկ անդամ՝ տեղամասային հանձնաժողովի մեկ անդամ սկզբունքով՝ մասնագիտական դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած քաղաքացիների շրջանակից:

Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովականների մեծ մասը՝ 1479 քաղաքացիներ (66,3%), իգական սեռի ներկայացուցիչներ էին, 1516-ը (68%) անկուսակցական էին, 381-ը (17%)՝ «Ազատ հայրենիք» կուսակցության, 232-ը (10,4%)՝ Արցախի Ժողովրդավարական կուսակցության, 90-ը (4 %)՝ «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության, 4-ը (0,2%)՝ «Ազգային վերածնունդ» կուսակցության, 1-ը (0,04%)՝ Արմենական կուսակցության և 6-ը (0,3%) Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցության անդամներ: Հանձնաժողովի անդամների 30-40 տոկոսը կազմել են այն երիտասարդ քաղաքացիները, ովքեր առաջին անգամ են մասնակցում համապետական նշանակության հանրաքվեի:

ՀԿՀ-ը ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակել հանրաքվեի ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչև ժամը 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ ընտրատարածքների հրապարակել է տեղեկություններ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թվի վերաբերյալ:

Քվեարկությունը անցել է հանգիստ և խաղաղ մթնոլորտում: Քվեարկության մասնակիցների ակտիվության պատճառով երբեմն առաջացել են հերթեր, սակայն չի գրանցվել որևէ դեպք, որ այդ պատճառով խոչընդոտվի քաղաքացիների հանրաքվեի իրավունքի իրականացումը և որևէ քաղաքացի այդ պատճառով զրկվի հանրաքվեի իրավունքից:

6) Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության օրը ժամը 20:00-ին փակվել են բոլոր հանրաքվեի տեղամասերը և հանրաքվեի տեղամասային հանձնաժողովները հանրաքվեի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը:

Հանրաքվեի տեղամասային հանձնաժողովներն հանրաքվեի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով, քվեարկության ավարտից հետո՝ 12 ժամվա ընթացքում, ավարտել են քվեարկության արդյունքների ամփոփումը:

ՀԿՀ-ը ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը, ժամը՝ 00.00-ից սկսած իրականացրել է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ հանրաքվեի տեղամասերի: Հանրաքվեի արդյունքների ամփոփման ամբողջ գործընթացն իրականացվել է բաց և թափանցիկ: Հանրաքվեի տեղամասերում դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել տեսանկարահանել քվեարկության արդյունքների ամփոփման ողջ գործընթացը:

Առկա չէ որևէ բողոք կամ նույնիսկ ահազանգ, որ հանրաքվեի տեղամասային հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց չի տրվել հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով: Առկա չէ որևէ դեպք, երբ հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները տարբերվեն ՀԿՀ կայքում հրապարակված տվյալներից:

7) Քվեարկության արդյունքների վերահաշվարկ

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածը մանրամասն կանոնակարգում է քվեարկության արդյունքների վերահաշվարկի ինստիտուտը: Հանրաքվեի դեպքում վերահաշվարկ կատարելու դիմում ներկայացնելու իրավունք ունի հանրաքվեի տեղամասային հանձնաժողովի անդամը՝ հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին

գրառում կատարելու դեպքում: Հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում ներկայացնելու համար օրենքը սահմանել է հստակ ժամկետ՝ քվեարկության հաջորդ օրը մինչև ժամը 18.00-ն: Վերահաշվարկի դիմումի համար սահմանված են տարրական, պարզագույն պահանջներ:

Հանրաքվեի տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում չի ներկայացվել:

8) Հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչում

ԼՂՀ ընտրական օրենսգրքի 45-րդ հոդվածի 8-րդ մասի 4-րդ պարբերությանը համապատասխան՝ հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում համապատասխան հանրաքվեի տարածքային հանձնաժողով կարող է ներկայացնել միայն քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն: Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն, եթե բողոքի կամ դիմումի քննարկման արդյունքով հանրաքվեի տարածքային հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել օրենսդրության պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, իսկ խախտումը արտահայտված չէ անճշտություններում, ապա այդ հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքները հանրաքվեի տարածքային հանձնաժողովը անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերը ուղարկվում են դատախազություն:

2017թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի արդյունքներով հանրաքվեի տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներ հանրաքվեի տարածքային հանձնաժողովներ չեն ներկայացվել:

9) Դիմում բողոքների քննարկում

2017թվականի փետրվարի 20-ին կայացած հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում ԼՂՀ հանրաքվեի մասին օրենսդրության խախտումների վերաբերյալ գրավոր դիմում-բողոքներ ԼՂՀ հանրաքվեի կենտրոնական և տարածքային հանձնաժողովները չեն ստացել:

10) Ղատարան ներկայացրած հայցադիմումները և դրանց քննությունը

Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի վերաբերյալ 2017թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում հանրաքվեի իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներ դատարան չեն ներկայացվել:

11) Հանրաքվեի արդյունքների բողոքարկում

ԼՂՀ Սահմանադրության 114-րդ հոդվածի համաձայն՝ հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը լուծում է Գերագույն դատարանը: ԼՂՀ Գերագույն դատարանը 2017թվականի փետրվարի 20-ի հանրաքվեի հետ կապված վեճեր չի քննարկել:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի առաջարկությունները

Վերջին տարիներին ԼՂՀ ընտրական օրենսդրության մեջ կատարված էական փոփոխություններն, անշուշտ, առաջընթաց արձանագրեցին թե ընտրական և թե հանրաքվեի իրավահարաբերությունների կարգավորման բնագավառում: Այնուամենայնիվ ընտրական գործընթացը կարգավորող առանձին նորմեր և ինստիտուտներ ունեն կատարելագործման անհրաժեշտություն:

Մեր դիտարկումների ու սահմանադրական փոփոխություններով պայմանավորված նորությունների հաշվառմամբ, ինչպես նաև դիտորդական առաքելությունների կողմից ներկայացված եզրակացություններում առկա առաջարկությունների մանրամասն ուսումնասիրությունից հետո, ԼՂՀ ընտրական և հանրաքվեի մասին օրենսդրության կատարելագործման նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախագիծ կներկայացնենք ավելի ուշ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ս.ՄԵԼՔՈՒՄՅԱՆ